



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՉԻՄՆԱԿՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երեքշաբթի, 22 Յունուարի յետմիջօրէին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամի պատուիրակութեան ու անոր հետ խորհրդակցեցաւ մարդասիրական այս կազմակերպութեան աշխատանքներուն ու ծրագիրներուն մասին:

Ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազանին տեղեկութիւններ տուին բժշկագիտական այն աշխատանքներուն ու ծրագիրներուն մասին, որոնք առաւելաբար կեդրոնացած են դժուար բուժելի հիւանդութեանց դարմանումին նպաստ բերելու մէջ: Անոնք գոհունակութեամբ փոխանցեցին, որ Հայաստանի առողջապահութեան նախարարութիւնը գործնական դիւրութիւններ տրամադրած է Հիմնադրամին, հայրենի իր գործունեութիւնը յառաջ տանելու համար: Վերջապէս, ներկայացուցիչները լուսաբանութիւններ տուին իրենց հանգանակային աշխատանքներուն մասին, որ Ապրիլին պիտի ընդգրկէ թելեթօն մը:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց Հ. Ո. Հիմնադրամի գործունեութիւնը եւ պատրաստակամութիւն յայտնեց կարելի միջոցներով զօրակցիլ անոր:

PRELATE WELCOMES REPRESENTATIVES FROM THE ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY

On the afternoon of Tuesday, January 22nd, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the Armenian Bone Marrow Donor Registry.

The Prelate and the delegation discussed the humanitarian work of the organization during which time the representatives conveyed to the Prelate details of the activities they have undertaken which focus on the treatment of diseases that are more difficult to cure. The delegation also appreciatively reported that the Ministry of Health in Armenia has facilitated the advancements of the organization in that country. The representatives also informed the Prelate of their fundraising activities which include a telethon to be held in April.

The Prelate commended the organization for their efforts and expressed his support to their endeavors.